Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

Ավարտական Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպման մեթոդները

Դասվար՝ Վերգինե Դավթյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

● ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …….3

● ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ…….4

● ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..6

● ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……7

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելը անհրաժեշտություն էր: Այսօր պատկերն այլ է:

Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը, իսկ ավելի դժվար է, ձևավորել իսկական ընթերցող: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը չի նշանակում դեռևս դառնալ ընթերցող: Գլխավորը ընթերցման կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը:

Զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիչն ինչպես երեխային օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ (բավական է երեխային պարտադրելը):

Տվյալ թեմայի վերաբերյալ մայրենիի դասին հանձնարարված գրականություն ուսումնասիրելով՝ երեխան ինքնաբերաբար մտնում է ընթերցողական դաշտ և կապվում գրքին:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենիի դասընթացում իրենց ուրույն տեղն են գրավում ինքնուրույն ընթերցանությ ան դասաժամերը :

Կրտսեր դպրոցականների ինքնուրույն ընթերցանության դասաժամերի նպատակը գրքի, ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացումն է և այդ ճանապարհով նրանց մեջ անձնային դրական որակների ձևավորումը:

Մեթոդապես ճիշտ և համակարգված ընթերցանության կազմակերպումը նպաստում է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների լուծմանը:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

● Ծանոթացնել սովորողներին մանկական գրականության նմուշներին, որոնք կարելի է ներառել ժամանակակից կրտսեր դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ,

● հետաքրքրություն ձևավորել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ,զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն,

● կատարելագործել սովորողների՝ գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն □կարողություն և սովորություն խորհելու գրքի շուրջ մինչև տեքստի ընթերցումը, ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո□,

● մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ:

Ի ՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

● Զարգացնեն տրամաբանությունը, հնարամտությունը,

կերպարային մտածողությունը,

● ըստ բարդության լինեն տարբեր մակարդակների,

● ունենան գործնական նշանակություն և

միջառարկայական բովանդակություն,

● լինեն հետաքրքրաշարժ իրենց ձևով, բովանդակությամբ

կամ լուծման միջոցներով,

● ունենան անսպասելի արդյունք:

Ի ՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ՁԵՎԵՐԸ

1. Դաս-հեքիաթ
2. դաս-ցերեկույթ
3. դաս-ճանապարհորդություն
4. դաս-խաչբառ
5. դաս-հանելուկ
6. դաս-դիմանկար
7. դաս-մրցույթ
8. դաս-հանդիպում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ուսուցչի անհանգստացնում է ճիշտ, գիտակցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական կարողությունների ձևավորումը, քանի որ ընթերցանությունը մեծ դեր է խաղում աշակերտի, անձի զարգացման և կրթության հարցում: Շատ ուսուցիչներ և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ: Մեր ժամանակներում գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստատեսությունը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը ճնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ինքնուրույն ընթերցանությունը կոչված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները: Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքներ: Հենց դրա միջոցով է իրականանում մի սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Նախաշավիղ ամսագիր
- Ինքնուրույն ընթերցանության նյութերի ժողովածու 4-րդ դասարան
- Նախաշավիղ ամսագիր , № 6.2015թ.
- Նախաշավիղ ամսագիր , № 5 . 2015թ.
- Նախաշավիղ ամսագիր № 1.2013թ.
- Ինքնուրույն ընթերցանության նյութերի ժողովածու 4-րդ դասարան
- «50 Հարց ու պատասխան » տարրական դասարանների ուսուցիչների համար (Մաս II